ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/2-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան                                                                                                                    12.04.2023թ.

**ՀՀ պաշտպանության նախարարությունը,** ի դեմս ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ **Կ. Բրուտյանի,** ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»,** մի կողմից, և **«ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Վ. Ղազարյանի,** որը գործում է «ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Վաճառող»,** մյուս կողմից, հիմք ընդունելով **03.02.2023թ.** կնքված **№ԳՀԱՊՁԲ-23-9/2-4** գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն № 1 և № 2 Հավելվածների:

1.1.1 Պայմանագրի 6.3 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու կամ չմատակարարելու դեպքում:

1.2 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, Համաձայնագրով նախատեսված ծավալներով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Համաձայնագրի № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի № 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***3 025 750(երեք միլիոն քսանհինգ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Համաձայնագրի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով սահմանված կարգով, բայց ոչ ուշ, քան մինչև 11.12.2023թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք.Աբովյան, 2-րդ մ/շ, 19 շենք |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արդշին բանկ» Աբովյան մ/ճ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 2471000494250010 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 03519299 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Վ. ՂԱԶԱՐՅԱՆ |

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/2-4 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | | մատակարարման ժամկետը 2023թ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV անվանումը | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ |
| 7 | հիդրոկորտիզոն a01ac03, a07ea02, c05aa01, d07aa02, d07xa01, h02ab09, s01ba02, s01cb03, s02ba01 | հիդրոկորտիզոն (հիդրոկորտիզոնի ացետատ ) hydrocortisone (hydrocortisone acetate) | հատ | 60 | 480 | 28,800 | 60 | |
| 27 | կլոտրիմազոլ a01ab18, d01ac01, g01af02 | կլոտրիմազոլ, clotrimazole | հատ | 4,000 | 168 | 672,000 | 4,000 | |
| 28 | կլոտրիմազոլ a01ab18, d01ac01, g01af02 | կլոտրիմազոլ clotrimazole | հատ | 700 | 492 | 344,400 | 350 | 350 |
| 29 | ֆլյուկոնազոլ d01ac15, j02ac01, j02ac01 | ֆլուկոնազոլ, fluconazole | հատ | 7,500 | 85.20 | 639,000 | 7,500 | |
| 44 | ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ B01AC30 | ացետիլսալիցիլա-թթու, մագնեզիումի հիդրօքսիդ acetylsalicylic acid, magnesium hydroxide | հատ | 2,100 | 10 | 21,000 | 2,100 | |
| 47 | տրիհեքսիֆենիդիլ n04aa01 | տրիհեքսիֆենիդիլ (տրիհեքսիֆենիդիլի հիդրոքլորիդ ) trihexyphenidyl (trihexyphenidyl hydrochloride) | հատ | 300 | 7.5 | 2,250 | 300 | |
| 49 | հալոպերիդոլ n05ad01 | հալոպերիդոլ haloperidol | հատ | 600 | 13 | 7,800 | | 600 |
| 58 | լորատադին r06ax13 | լորատադին, loratadine | հատ | 10,000 | 17.50 | 175,000 | 10,000 | |
| 62 | ալբենդազոլp02ca03 | ալբենդազոլ albendazole | հատ | 2,850 | 158 | 450,300 | 2,850 | |
| 63 | մեբենդազոլp02ca01 | մեբենդազոլ mebendazole | հատ | 1,700 | 324 | 550,800 | 1,000 | 700 |
| 65 | պերմեթրին p03ac04 | պերմեթրին permethrin | հատ | 140 | 960 | 134,400 | 140 | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ Տնօրեն

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-23-9/2-4 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| հ/հ | CPV կոդը | CPV անվանումը | նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2023թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների՝ ընդ որում | | |
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 11.12.2023թ. |
| 7 | 33621640/503 | հիդրոկորտիզոն a01ac03, a07ea02, c05aa01, d07aa02, d07xa01, h02ab09, s01ba02, s01cb03, s02ba01 | 28,800 | 28,800 | 28,800 |
| 27 | 33651148/501 | կլոտրիմազոլ a01ab18, d01ac01, g01af02 | 672,000 | 672,000 | 672,000 |
| 28 | 33651148/502 | կլոտրիմազոլ a01ab18, d01ac01, g01af02 | 172,200 | 344,400 | 344,400 |
| 29 | 33651150/501 | ֆլուկոնազոլ d01ac15, j02ac01, j02ac01 | 639,000 | 639,000 | 639,000 |
| 44 | 33621761/501 | ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ B01AC30 | 21,000 | 21,000 | 21,000 |
| 47 | 33661134/501 | տրիհեքսիֆենիդիլ n04aa01 | 2,250 | 2,250 | 2,250 |
| 49 | 33661139/502 | հալոպերիդոլ n05ad01 | 0 | 7,800 | 7,800 |
| 58 | 33671131/501 | լորատադին r06ax13 | 175,000 | 175,000 | 175,000 |
| 62 | 33691121/501 | ալբենդազոլp02ca03 | 450,300 | 450,300 | 450,300 |
| 63 | 33691123/501 | մեբենդազոլp02ca01 | 324,000 | 550,800 | 550,800 |
| 65 | 33691128/501 | պերմեթրին p03ac04 | 134,400 | 134,400 | 134,400 |
| Ընդամենը՝ | | | | | 3,025,750 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԱՐՓԻՄԵԴ» ՍՊԸ Տնօրեն

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ